բագործել մարդկային բարձր իդեալները, որոնք յայտնված են եղել մեր հայրենիքի մեծ իշխանների և մեծ մարդկանց բերանով: Յարգանք դէպի բոլոր դաւանութիւնները, հաւասար տեղ արեգակի ճառագայթների տակ ամենն ազատ մրցութեանը: Ամենքի համար, լինի նա հրեայ թէ քրիստոնեայ, ամեն պատիւ վայելելու նոյն իրաւունքը և նոյն վարձատրութիւնը արժանաւորութեան համար,—ահա մեր ազգակը:"

Մենք այդ գեղեցիկ և ճշմարիտ մարգաւէտ խօսքերին ոչինչ չունենք մեր կողմից աւելացնելու: Այդ խօսքերը պատիւ են բերում լուսաւորված ազգի ազնիւ ներկայացուցիչներին:

Կաւելացնենք միայն որ այդ բոլոքը ստորագրված է եղել Բերլինի գերմանական ինտելիգենցիային պատկանող եօթանասուն և չորս ամենանշանաւոր անուններով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԶԼԱՐԻՑ

Նոյնմերի 11

Որովհետև շատ անգամ պատահել է որ մի և նոյն գիրքը երկու զանազան անձինք են թարգմանել հայերէն, այնպէս որ մէկի աշխատութիւնը միւսը զուր է անցել, ուստի տարի համարեցի յայտնել, որ ես ձեռնարկել եմ արդէն թարգմանել ,,Մէջ տասնմէնեարդ դարու" Լիկիրոսի մանկավարժական նամակները, որը, որքան ինձ յայտնի է, դեռ չը կայ հայերէն թարգմանած: Գիրքը, գէթի թարգմանութեան, մտադիր եմ առաջարկել ,,Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակական բաներութեանը" ազգարութեան համար, եթէ միայն նա յարմար կը համարէ այդ գիրքը ի լոյս ածել:

Մեծատատիպ խմբագիր, խնդրեմ բարեհաճէք ձեր ,,Մշակ"-ի մէկ անկիւնում տեղ չնորհէք այդ իմ երկտող նամակիս:

Խնդրեմ ընդունել իմ անկեղծ յարգանաց հաւատաքը:

Թամար Կամկամանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Որովհետև «Մշակի» բաժանորդագրութիւնը 1881 թուի համար արդէն սկսվել է, այդ պատճառով մենք յայտնում ենք, որ մեր խմբագրատունը բաց է լինում ամեն օր բացի կիրակի օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ և կէս օրից յետոյ 4 ժամից մինչև 6 ժամ:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ կեղծ տարուց սկսվելու է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ մի նոր ռուսաց ամենօրեայ մեծ թերթի հրատարակութիւն, «Կարգ» վերնագրով (Порядокъ): Այդ լրագիրը խմբագրված կը լինի «Вѣстникъ Европы» ամսագրի խմբագրութեան անդամներով: Շատերը, որոնք անդամութիւն ունէին, ինչպէս օրինակ պրոֆէսոր Մոզեսով, իրանք հիմնել մի նոր լրագիր, հէնց որ իմացան, որ «Порядокъ» լրագիրը հանդէս գալու կը գայ, խմբագրված լինելով հնուտ ձեռքերով, թողեցին իրանց գիտատարութիւնը և մնացան նոր լրագրի խմբագրութեան հետ:

—

Ս. Պետերբուրգի «Peters. Herold» գերմանական լրագիրը լսել է, որ կառավարութիւնը գիտատարութիւն ունի փակել Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Իրաւաբանական դպրոցը (училище Правовѣдѣнія) և այստեղ իրաւաբաններ պատրաստելու գործը յանձնել միմիայն համալսարաններին:

—

Այս ուրբաթ օր բացվելու է ԹԻՖԼԻՍՈՒՄ առաջին մասնաւոր բժշկական երթևեկ հիւանդների համար բժշկական Պովլովսկու կառավարութեամբ: Միւս բժշկիները, որոնք մասնակցելու են բժշկարանին սրանք են. Նաւասարդեան, Բուգրովսկի, Ուշակով, Շանազիգանց և Լուսկովիչ: Ցնչա կարող ամբողջ սրանց չը ցանկանալ կատարեալ ազդուրութիւն այդ օգտաւէտ հիմնարկութեանը:

—

Կասպանք ԿԱՐԻՑ պ. Բաղդասար Ապահանցից 15 բուբլի յօգուտ Վասպուրականի սովալներին: Այդ գումարը հաւաքված էր հետեւեալ պարոնոներից: Ամոն Գաղամեանց 5 ր., Բաղդասար Ապահանց 3 ր., Եղիշէ Բաղդասարեան 3 ր., Յարութիւն Դերգասեանց 3 ր., Ազարէկ Եաղոդլով 1 ր., Ընդամենը 15 բուբլի: Փոստի ծախսը վճարել է պ. Ապահանց:

—

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, որ այդ տեղի հայ ուսանողները ստորագրութիւն են բացել յօգուտ թիւրքաց Հայաստանի սովամաններին, բացի սրանից շուտով գիտատարութիւն ունեն տալ մի թատրոնական ներկայացում մայրենի լեզուով նոյն նպատակով: Գովելի են մայրաքաղաքի մեր հայ ուսանողների ջանքերը օգնութիւն հասցնել սովատանջ թիւրքաց Հայաստանին, որ, ինչպէս երևում է այլ ևս ոչինչ յոյս չը պէտք է դնի Եւրոպայի օգնութեան վրա: Թող մեր ուսանողներին հետևեն ամեն գաղտարգի հայ մարդիկ: Ճշմարիտ հայի առջև բաց է լայն ասպարէզ մարդասիրական և ազգասիրական այդ գործում:

—

Յօգուտ Կ. Պոլսի «Միացեալ ընկերութեան» տասանքը 5 բուբլ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, պ. Ս. Սերգէևանցից:

—

Մեզ գրում են Ս. Պետերբուրգից հետեւեալը: Այստեղ նորերումս պ. Վ. Կորշի խմբագրութեամբ լոյս է ընծայվել «Ընդհանուր գրականութեան պատմութիւնը» IV տեսրը: Ահա Ռուսաց վերնագիրը «Всеобщая Исторія Литературы сост. по источникамъ и новѣйшимъ изслѣдованіями при участіи русск. ученыхъ и литераторовъ, подъ редакціею В. Ѳ. Корша (Вып. IV. С.-Петерб, изд. Карла Риккера, Невск. № 14, 1880 г.)» Պ. Կորշը իր գեղեցիկ գործը ձեռնարկել է աջակցութեամբ Ս. Պետերբուրգի համալսարանի մի քանի արեւելագէտների, որոնց թւում է և մեր գիտական պրոֆէսոր Քերովբէ Պատկանեան: Վերջինս յօդուածի վերնագիրն է ,,Очеркъ Исторіи древней Армянск. литературы К. П. Патканова. Древнѣйшіе остатки армянской письменности. Географическія особенности Арменіи. Ея историческія судьбы. Церковно—христіанскій характеръ армянской литературы. Армянская литература до нашествія арабовъ." Մենք պարտական ենք հրապարակօրէն մեր համակրութիւնը յայտնել մեր յարգելի գիտնականին, որ իր այս նոր երկասիրութեամբ մեծ ծառայութիւն է մատուցանում իր ազգին. այսուհետև հայոց գրականութիւնը իր վարելուց տեղը պիտի բռնի օտարազգի գրականութիւնների շարքում: Այս ունենք որ ,,Փոքր" խմբագրութիւնը յանձն կառնի թարգմանել տալ այդ գրվածը հայերէն լեզուով և կը հրատարակի իր ամսագրի մէջ:

—

Շաբաթով Թիֆլիսի հայոց մշական թատրոնական խումբը տալու է Շէկսպէրի ,,Համլէտ" ողբերգութիւնը Գարմի թատրոնում: Լսում են որ առաջին ներկայացման համար բոլոր տոմսակները առնված են:

ԸՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔՐԴԱԿԱՆ ՄԵՒՈՒԹԻՒՆ

,,Голосъ" լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Նորերումս հեռագիրը մեզ հաղորդեց պարսկական զօրքերի աջողութեան մասին քիւրդերի դէմ, որոնք թափել էին թիւրքիայի սահմանակից Ադրբէյանական պարսից նահանգը: Հեռագրից չէ երևում թէ պարսկական զօրքերը ինչտեղ ունեցան աջողութիւն, կամ թէ շահին հպատակված քիւրդ առաջնորդների անունները որոնք են:

Հէյլ Իրդուլլահի առաջնորդութեամբ քիւրդերի յարձակմունքը Պարսկաստանի սահմանակից երկիրների վրա անկարելի չէ: Այդ յարձակմունքը կարելի է մեկնել ցանկութեամբ կողոպտել սահմանակից երկիրը: Այդ յարձակմունքը մինչև անգամ կարելի էր մեկնել ցեղական թշնամութեամբ կամ մի անբարեկամութեամբ արտատեղիների պատճառով, եթէ հեռեւանցքերը չը բացատրէին այդ յարձակմունքը:

Թիւրքաց քիւրդերը յարձակվում են Պարսկաստանի ամենահարուստ նահանգի վրա, քանի որ այդ պետութեան յարաբերութիւնները թիւրքիայի հետ բարեկամական են: Քիւրդերը պարսից իշխանութեան կողմից արգելքների չեն հանդիպում, ընդհակառակը նրանց օգնում են իրանց հաւատակիցները և նրանց թիւը հասնում է 15,000—20,000: Սա հասարակ արշաւանք չէ կողոպտելու նպատակով:

Թէ թիւրքաց և թէ պարսից քիւրդերը գլխաւորապէս թափառական, անանապատութեամբ պարապող ժողովուրդ են: Թէ պարսից և թէ թիւրքաց Քիւրդիստանի մէջ այնպիսի քաղաքներ կան, որոնք բնակեցված են զաղթած տարերքով՝ հայերով, նեստորականներով, յոյներով և հրէաներով: Քիւրդերը չունեն անպէս այնպիսի օջախ, ինչպէս դա հասանալի է Եւրոպայում: Քիւրդի համար ամեն տեղ լաւ է, որտեղ նա իր ցեղի հետ գնում է իր սև վրանը և եթէ կան քիւրդական գիւղեր, նրանք զարնան սկսվելուն պէս դատարկվում են և բոլոր բնակիչները սարերն են գնում: Արշաւանքը և կողոպուտը նրանց համար սովորական պարապմունքն է: Երբեմն նրանց արշաւանքները աւելի ազնիւ ձև են ունենում, բայց դրանք էլ նոյն ասղգակային արշաւանքներ են:

Այսպիսի ընդհանուր երևոյթներից մէն տիպ հետաքրքրում են հասարակութիւնը: Այդ ամենը ապաբաղդաբար գրեթէ առանց բացառութեան ազգոյց կրթութեան է վերաբերում: Այդպէս ուրեմն և այդտեղ մոռացված է բարձրագոյն հայ կինը: Բայց այն ինչ բոլորին յայտնի է այն խեղճութիւնը, թէ կինը այն իրաւունքն ունի, ինչպէս տղամարդը, թէ նրա կրթութիւնը ինչպէս և տղամարդինը անհրաժեշտ է, թէ վերջապէս առանց կնոջ կրթութեան անկարելի է մտածել և ընտանիքի վերանորոգութեան և մինչև անգամ տղամարդի կանոնաւոր կրթութեան մասին:

Դաբա, որոնք նայում են կնոջ վրա, իբրև մի հասարակ անտեսի վրա, երևում է, որ չեն սիրում նրան աւելի լուսաւորված ներկայացնել, իսկ գիւղական կնոջ կրթութիւնը, այդպիսիների համար կարող է մինչև անգամ աւելորդ բան համարվել: Ամ յիրաւի, ինչ հարկաւոր է գիւղական կնոջ լուսաւորութիւն, մինչդեռ նրա կեանքը միանգամ որոշված է. գուցէ գալ այդ չը լինի—չը կայ ոչ մի հնար. վարել ուրիշ կեանք—անհնարին է, որովհետև դրա համար հարկաւոր են նրբթական միջոցներ: Այդպէս ուրեմն նա միշտ պիտի ենթարկվի ճակատագրի ծանր հարուածներին, ուստարական միաձուսակ կեանքի եղանակին և պարի առանց փոփոխութեան,—այնպէս՝ ինչպես ասվել են իր նախնիները, թողնելով մի կողմ այն ամեն հնարքները ու միջոցները, որոնք յատուկ չեն գիւղական աղքատիկ կեանքին: Այդ տեսակ գատողութիւնները ըստ երևոյթին ունեն մի քանի ճշմարիտ կողմեր, բայց իսկապէս ապացուցանում են այն, ինչ որ ուզում են ասել: Մեթէ գիւղական օրիորդաց կրթութիւնը երեսակայութիւն է. մեթէ նա յատուկ չէ գիւղական աղքատիկ կեանքին և անհրաժեշտ պայման նրա բարօրութեան: Հէնց միայն այն պատճառաւ, որ գիւղական կեանքը ազքատ է—գիւղացու կնոջ ուրեմն է հարկաւոր կրթութիւն, որ նա կարողանայ սորանով իր աշխատանքը աւելի խելքը կերպով պատարել, կեանքի միջոցները լայնացնել, ժամանակի և աշխատանքի կորուստը կարճել և հետևապէս բոլոր կեանքը բարձրել: Այդ ճշմարտութիւնը ամենին վաղուց արդէն յայտնի է, այնպէս որ բացատրութեան կարիք չունի: Ով ուզում է, թող նայել նա Շվեյցարիայի ու Ամերիկայի կրթված մայրերի ու տնտեսների վրա: Ի կարկէ, իբրաքանչիւր երկրի բարօրութիւնը կախումն ունի ուրիշ չատ պատճառներից, բայց չը պիտի մոռանալ, որ ընտանիքների կրթութիւնը այդ պատճառների մէջ գրեթէ գլխաւոր գերն է խաղում: Կրթութիւն ասելով մենք այստեղ հասկանում ենք ամենից առաջ ոչ թէ որ և իցէ տեսակցական կրթութիւն—այլ և տարրական լաւ կրթութիւն, ըստ որում առանց այդ վերջինի միտք չունի և մասնագիտական տեսնիկական կրթութիւնը: Ով ճանաչում է ու գիտէ թէ՝ ինչպէս դժուար է հասկանում չը զարգացած մարդը ամենասարակ բանն անգամ, օրինակ վերնագրական նշանակութիւնը—մի խօսքով ով լաւ գիտէ մեր հասարակ գիւղական ժողովրդի ընտանեկան ու տնտեսական կեանքը, նա մանաւանդ կասկածց, որոնք առհասարակ աւելի անզարգացած են և աւելի նախապաշարված, քան տղամարդիկ—նա կարող է հասկանալ գպրոցի նշանակութիւնը ընտանեկան կեանքի վրա դրա վերաբերմամբ ու կը ցանկայ, որ սան անտեսուհին ուներ ոչ միայն առողջ միտքներ, այլ և առողջ բանականութիւնը ու լաւ կրթութիւն: Կնոջ բարձր նշանակութիւնը ընտանիքի մէջ ստեղծում է ցաւեղ ամեն մի զարգացած մարդու նրա ներկայ անմխիթար դրութեան վրա և դրդում է ցանկալ կանանց կրթութեան զարգացմանը: Կիները—ընտանիքի մայրն է, ամբողջացնող նրա խրտնամարդութեան և յանձնված նոր ազգ սերնդի ճակատագիրը. մինչև անգամ գիւղական կեանքում տղամարդը շատ պատճառներով չէ կարող նստեցնել իրան իր երեխայոց դաստիարակութեանը—նա աւելի շատ է բացակայ լինում տանից և կան տեղեր, որտեղ նա տանը լինում է մի քանի ամիս, իսկ մնացեալ ժամանակները անց է կացնում ընտանիքից հեռու աշխատանքի մէջ: Մենք այնքան շատ ենք ընտելացած կեանքի անտարբեր երևոյթներին, որ մայրը բաւական գրեթէ ոչինչ չէ յիշեցնում մեզ այն պարտաւորութեանց մասին, որոնք սերտ կապված են այդ բառի հետ և այն պարտքի մասին, որոնք ընկած է ընտանիքի մայրվրա: Մենք այնքան ընտելացած ենք տեսնել թէ՝ ինչպէս են գտնվարակվում երեխայք աղքատ ընտանիքներում, որ զարմացում ենք հասկանալ դաստիարակութիւն բառը այն մասում, ինչպես բացատրում է մեզ մանկավարժութիւնը: Գիւղական երեխան հէնց որ մոր կաթից կտրվում է ու մնացել է սովորում թէ չէ, թողնում են նրան բոլոր նեխան ու կեանքի պարագաների ազդեցութեան, նա զարգանում է այնպէս, ինչպէս ուզում է. իսկ կրթողական ազդեցութիւն—ոչ մի տեղից: Այդ կիսավայրենաւոր առաջին անգամ աւանդում են դպրոցի մէջ քաղաքակրթութիւն, որտեղ նա և մեծ աշխատանք է պահանջվում ուսուցչից նախ և առաջ կարգի բերել նրան, սովորցնել մաքրութեան ու կարգապահութեան, յետոյ—ուրիշ նոր աշխատանք—ենթարկել նրան մանկավարժական խոհեմիտ կանոններին և որքան կարելի է աւելի շատ աշխատանք—չարժել միտքը ու սովորցնել նրան կանոնաւոր մտածողութեան: Դպրոցի հանգամանքներում այդ գործը դպրոցը միայն կարող է կատարել: Դպրոցի այդ ծանր աշխատանքը մասամբ ընտանիքը կարող է թեթևացնել, եթէ որ ընտանիքի մայրը փոքր ի շատ կրթված է: Մենք երբէք մոր վրա հեգնանք չենք անում, մենք երբէք չենք մտածում, որ մայրը ծանօթ լինի Պեստալոցզի, Դիստերվեգի ու Ֆրեօբելի իդեաների հետ, որովհետև որքան սա ցանկալի է, այնքան ևս ներկայումս անգործադրելի մեր գիւղական կեանքի վերաբերմամբ: Բայց մենք անշրաժեշտ ենք համարում, որ մայրը կարողանայ բարի դաստիարակական ազդեցութիւն ունենալ իր երեխայոց վրա, որովհետև ուստց դրան մենք չենք կարող հասկանալ մեր նշանակութիւնը: Այդ ամեն ցանկութիւնները չատ լաւ են. տեսնենք այժմ դրա կանգի մէջ գործադրել արդեօք կարելի է: Մենք հասկանում ենք, որ գժուար է դրանց իրագործել, բայց մի բոլոր չենք կասկածում, որ այդ ցանկութիւնները (թէև ոչ յանկարծ) անշուշտ կարող են իրագործվել: Դրա համար երբեմն, նա զգոնանում է այնպէս, ինչպէս ուզում է. իսկ կրթողական ազդեցութիւն—ոչ մի տեղից: Այդ կիսավայրենաւոր առաջին անգամ աւանդում են դպրոցի մէջ քաղաքակրթութիւն, որտեղ նա և մեծ աշխատանք է պահանջվում ուսուցչից նախ և առաջ կարգի բերել նրան, սովորցնել մաքրութեան ու կարգապահութեան, յետոյ—ուրիշ նոր աշխատանք—ենթարկել նրան մանկավարժական խոհեմիտ կանոններին և որքան կարելի է աւելի շատ աշխատանք—չարժել միտքը ու սովորցնել նրան կանոնաւոր մտածողութեան: Նրանց գաղտնանգեներում այդ գործը դպրոցը միայն կարող է կատարել: Դպրոցի այդ ծանր աշխատանքը մասամբ ընտանիքը կարող է թեթևացնել, եթէ որ ընտանիքի մայրը փոքր ի շատ կրթված է: Մենք երբէք մոր վրա հեգնանք չենք անում, մենք երբէք չենք մտածում, որ մայրը ծանօթ լինի Պեստալոցզի, Դիստերվեգի ու Ֆրեօբելի իդեաների հետ, որովհետև որքան սա ցանկալի է, այնքան ևս ներկայումս անգործադրելի մեր գիւղական կեանքի վերաբերմամբ: Բայց մենք անշրաժեշտ ենք համարում, որ մայրը կարողանայ բարի դաստիարակական ազդեցութիւն ունենալ իր երեխայոց վրա, որովհետև ուստց դրան մենք չենք կարող հասկանալ մեր նշանակութիւնը: Այդ ամեն ցանկութիւնները չատ լաւ են. տեսնենք այժմ դրա կանգի մէջ գործադրել արդեօք կարելի է: Մենք հասկանում ենք, որ գժուար է դրանց իրագործել, բայց մի բոլոր չենք կասկածում, որ այդ ցանկութիւնները (թէև ոչ յանկարծ) անշուշտ կարող են իրագործվել: Դրա համար եր-